


ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք.Արմավիր

Տարածաշրջանները՝

Արմավիր,

Էջմիածին,

Բաղրամյան

Քաղաքները՝

Վաղարշապատ,

Արմավիր,

Մեծամոր

Տարածքը	1 242 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	4.2 %
Համայնքներ, 2016թ. տարեկգրի դրությամբ	97
Քաղաքներ	3
Գյուղեր	95
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեկգրի դրությամբ	266.6 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	84.6 հազ. մարդ
գյուղական	182.0 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	8.9 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	31.7 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	97 022.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	41 258.6 հա

ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է հանրապետության արևմտյան հատվածում:

Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Ար-մավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին:

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկալնդեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր:

Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 4.3 %
- գյուղատնտեսություն՝ 17.5 %
- շինարարություն՝ 3.5 %
- մանրածախ առևտուր՝ 3.8 %
- ծառայություններ՝ 1.7 %

Արմավիր քաղաքը (2016թ. տարեկզբին՝ 28.9 հազ. մարդ) գտնվում է Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Մեծամոր քաղաքը (2016թ. տարեկզբին՝ 9.0 հազ. մարդ) քաղաքը (Երևանից 38 կմ հեռավորությամբ) նշանավոր է ՀՀ ատոմակայանով, որը զբաղեցնում է 300 հա տարածք, իր մեծությամբ և հզորությամբ միակն է Հարավային Կովկասում:

Վաղարշապատ քաղաքը (2016թ. տարեկզբին՝ 46.7 հազ. մարդ) գտնվում է Երևանից 20 կմ հեռավորության վրա: Մեծությամբ և նշանակությամբ մարզում այն առաջին քաղաքն է:

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
Վաղարշապատ	46 749
Արմավիր	28 885
Մեծամոր	8 988

ԳՑՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Արմավիրի տարածաշրջան		
1	Ալաշկերտ	2 161
2	Ամասիա	1 203
3	Այգեշատ	2 129
4	Այգեվան	1 647
5	Արագափ	1 830
6	Արաքս	2 139
7	Արգավանդ	2 468
8	Արմավիր	3 582
9	Արտաշար	1 423
10	Արևիկ	3 053
11	Բամբակաշատ	3 476
12	Բերքաշատ	631
13	Գետաշեն	2 704
14	Եղեգնուտ	2 162
15	Երասխահուն	2 071
16	Զարթոնք	2 620
17	Լենուրի	1 723
18	Լուկաշին	2 615
19	Խանջյան	2 024
20	Հայկավան	1 499

¹Մարզի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

² ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 953 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2016թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.9%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
21	Հացիկ	2 679
22	Մայիսյան	2 016
23	Մարգարա	1 420
24	Մրգաշատ	6 438
25	Նալբանդյան	4 369
26	Նոր Արմավիր	1 998
27	Նոր Արտազերս	1 848
28	Նորապատ	2 315
29	Նորավան	1 370
30	Նոր Կեսարիա	1 650
31	Շենավան	1 744
32	Զանֆիդա	3 488
33	Զրաշեն	928
34	Սարդարապատ	6 295
35	Վարդանաշեն	1 351
36	Տանձուտ	2 012
37	Փշատավան	2 666
Բաղրամյանի տարածաշրջան		
1	Արզինա	650
2	Արտամետ	253
3	Արևադաշտ	362
4	Բազարան	713
5	Բաղրամյան	1 054
6	Դալարիկ	4 369
7	Երվանդաշատ	782
8	Լեռնագոգ	2 422
9	Կողբավան	140
10	Հուշակերտ	1 037
11	Մյասնիկյան	4 478
12	Շենիկ	1 058
13	Վանանդ	1 005
14	Տալվորիկ	194
15	Քարակերտ	4 880
Էջմիածնի տարածաշրջան		
1	Ակնալիճ	3 303
2	Ակնաշեն	1 737
3	Աղավնատուն	3 640
4	Ամբերդ	1 777
5	Այգեկ	1 513
6	Այգեշատ	2 114
7	Ապագա	1 996
8	Առատաշեն	3 042

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
9	Արագած	2 880
10	Արաքս	2 047
11	Արշալույս	4 098
12	Արտիմետ	2 176
13	Արևաշատ	2 298
14	Բաղրամյան	2 828
15	Գայ	3 527
16	Գեղակերտ	3 172
17	Գրիբոյեդով	2 002
18	Դաշտ	1 019
19	Դոդս	1 505
20	Թախրով	2 884
21	Լեռնամերձ	519
22	Լուսազյուղ	1 124
23	Խոբոնք	2 937
24	Ծաղկալանջ	1 706
25	Ծաղկունք	1 386
26	Ծիածան	1 341
27	Հայթաղ	3 194
28	Հայկաշեն	1 486
29	Հովտամեջ	1 615
30	Մեծամոր	1 442
31	Մերձավան	3 694
32	Մրգաստան	1 484
33	Մուսալեռ	2 897
34	Նորակերտ	3 199
35	Շահումյան	1 924
36	Շահումյանի թոչնաֆարրիկա	1 219
37	Ոսկեհատ	3 435
38	Պտղունք	2 072
39	Ջրառատ	3 198
40	Ջրաբբի	1 751
41	Տարոնիկ	2 291
42	Փարաքար	6 079
43	Ֆերիկ	363

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2015թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 115	4 885
Ծնվածներ, մարդ	130	61	69
Մահացածներ, մարդ	87	43	44
Ամուսնություններ	58	X	X
Ամուսնալուծություններ	9	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	182	87	95
հանրակրթական	1 264	583	681
երաժշտական, արվեստի, զեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	72	48	24
նախնական մասնագիտական (արհեստագործական)	7	3	4
միջին մասնագիտական	43	23	20
բարձրագույն մասնագիտական	7	1	6
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	35 539
Մարզիկներ, մարդ	36	5	31
Զբաղվածներ, մարդ	4 811	2 307	2 504
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	135	115	20
բժիշկներ	14
միջին բուժանձնակազմ	39
Գործազուրկներ, մարդ	498	185	313
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 264	753	511
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	220	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	23 526
թատրոն	-	-	-

¹ Ցուցանիշները հաշվարկային են:

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
համերգ	-	-	-
թանգարան	1 588
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	41	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	23	X	X
միջին ծանրության	11	X	X
ծանր	7	X	X
առանձնապես ծանր	1	X	X